

**«ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում  
վերաբաշխում, ՀՀ կառավարության 2018 թվականի  
դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ  
փոփոխություններ կատարելու և Հայաստանի  
Հանրապետության տրանսպորտի, կապի և  
տեղեկատվական տեխնոլոգիաների  
նախարարությանը գումար հատկացնելու մասին»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ  
ՏԵԴԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>  
Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասին և 23-րդ  
հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության  
կառավարությունը որոշում է.

1.«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել  
վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018  
թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2019  
թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների  
մասին>> N 1515-Ն որոշման N 5, 11 և 12 հավելվածներում կատարել  
փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2,3 և 4 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և  
տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը Հայաստանի  
Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված  
Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային  
ֆոնդից՝ 2019 թվականի առաջին կիսամյակում Աշտարակ-Թալին  
կմ51+000-կմ71+500 հատվածի ընթացիկ ծմեռային պահպանման  
նպատակով հատկացնել 16,016.0 հազար դրամ՝ բյուջետային  
դասակարգման <<շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և  
պահպանում>> հոդվածով: